

## ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՔԱՆՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

(Տես էրես 138.)

### Գործարանաց աշխատանքը

Ահա ուրեմն ստուգեցինք թէ արիւնն է որ մարմնոյն մէջ ամեն բան կը շարժէ: Գործարանը առանց իրեն՝ ծոյլ և անգործ կը մնան. չեն աշխատիր մինչև որ կրակը զիրենք չխթէ. և այս կրակը միշտ մարելու պատրաստ է, եթէ արիւնը՝ թոքոց մէջէն բերած թթուածինով, զնոյն անդադար անոնց մէջ չբռնկւցընէ:

Այս բանս մեզի դիւրին միջոց մը պիտոր ըլլայ շատ բանի մեկնութիւնը տալու, որ քեզի նոր չեն, սակայն հաւանականաբար մինչև ցայսօր անոնց պատճառը չես բնութաւած:

Եւ նախ, կը յիշես անցած օրն ինչ եղաւ քեզի՝ երբ վազելով քու ստահակ եղբայրդ ուղեցիր բռնել, որ իր դպրոցական սրունքները չարաչար գործածելով, անխնայ դքեղ պարտիզին ամեն ճամբաներէն վաղցուց, առանց այնչափ ազնուութիւն բանեցընելու՝ որ վերջապէս ինքզինքը բռնել տայ: Շնչասպառ եղեր էիր. քու պզտի սիրտդ ցաւցընելու չափ կը բաբախէր. և այնչափ քրտներ էիր, որ ջուրը մեծ մեծ կաթիլներով երեսէդ վար կը վազէր. անանկ որ մայրդ վախնալով դքեղ գրկեց ու կրակին մօտ տարաւ, որովհետեւ երեկոյեան զովը սկսեր էր զգացուիլ. և պզտի աղջիկ մ'որ քրտինքի մէջ թաթխուած ըլլայ, մէկէն պաղ կ'առնու:

Ի՞նչ վերաբերութիւն կայ, ըսէ ինծի, շատ երկայն վաղելուն և այն արտաքոյ կարգի ջերմութեան մէջ, որ այնպէս շուտ վրադ եկաւ: Այտերդ պաղ և սպիտակ էին երբ վաղել սկսար.

ով այնպէս կարմրեց զանոնք. որովհետեւ պարտէզը զով կ'ընէր այն տոտեն:

Աշուրներդ մեծ մը կը բանաս զարմացմամբ, որովհետեւ ատոր վրայ երբեք մտքէդ բան մը չէիր անցուցած: Ասանկ են ահա պզտի աղջիկները: Կը վազվրտտեն, կը տաքնան. և այդ տաքութիւնն անանկ բնական մը կ'երևնայ, ինչպէս թէ արևուն մէջ տաքնային, ուստի և ոչ պատճառը կը հարցընեն:

Հիմա որ այնչափ բան սօրվեցար, այդ պատճառը գրեթէ կրնայիր զուրցել ինծի, քիչ մ'որ մտածելու ըլլայիր վրան. սակայն խնդիրը շուտով լմնցնելու համար կ'ուզեմ քեզի քիչ մ'օգնել:

Ինչպէս թուունը կը թռչի՝ ասանկ դու ալ կը վազես առանց վրան մտածելու: Սակայն թէ որ դիւթական դիտակով մը կարենայիր դիտել ինչ որ ներսի դիզ կը հանդիպի, մինչդեռ քու պզտի ուսուրներդ զինքը փետուրի մը պէս կը յածեցընեն պարտիզին մէջէն, բոլորովին զարմացած պիտոր մնայիր: Մէյ մ'որ այս օրերս մեր այս անդամուն պատմութիւնը լրմնցընենք, այդ միւս պատմութիւնն ալ կ'ուզեմ պատմել քեզի, վասն զի կ'աժէ: Միայն ուռ այժմ՝ այսչափ դիտցիր որ ատոր մէջ քիչ մը շատ խրթին գործողութիւն կայ, որուն մի և նոյն ժամանակ մասնակից կ'ըլլան գրեթէ մարմնոյն բոլոր դնդերը, փոփոխակի ամփոփուելով ու ձգտելով, ինչպէս թէ զսպանակներ ըլլային որոնցմէ իւրաքանչիւրը մեքենային մէկ մասը յառաջ կը նետէ կամ ետ կը քաշէ: Այդպէս, մինչդեռ դու աչքերդ թիթեռնիկին վրայ տնկած ես՝ որ առջևէդ կը փախչի, քու ներսի դիզ չարաչար ճիգ մը կը թափի, որուն ոչ երբեք կը զիջանէին մեր ծոյլ գործարանները, եթէ այն ահաւոր հոգաբարձուն զիրենք անդադար խարաղանաւ չզրդուէր:

Անոր խարաղանը, ըսինք, ներքին կրակն է, որուն նիւթերը մարմնոյն ամեն դին ինքն կը հրէ: Պէտք է ուրեմն որ այն ատեն կրակը սովորականէն աւելի բռնկցընէ, ճշդիւ ինչպէս կ'ընեն

երկաթուղւոյն մեքենագործները, որ աւելի կրակ կը վառեն երբ կ'ուզեն աւելի շուտ երթալ:

Ասկէ կը հասկընաս որ շատ զարմանալի բան չէ եթէ քու պզտի մարմինդ այդ կերպով կը ջերմանայ, և երբ այդ ջերմութեան կերպը երթալով շատ կ'երկընայ, այն մեծ կաթիլներն որ ամեն դիէն վրայէդ կը սկսին վազել ուրիշ մեկնութիւն չեն ուղեր:

Այս բաւական չէ: Այդ կրակը, զոր աւելի սաստիկ բռնկեցընելու վրայ է խնդիրը, բնականապէս աւելի առատ կիզելի նիւթ կը պահանջէ. և որովհետեւ արեան իւրաքանչիւր կաթիլն այդ կիզելի նիւթէն միայն որոշեալ չափ մը կը բովանդակէ, որպէս զի կարենայ դընդերի մը մէջ աւելի առատութեամբ տանիլ, պէտք է որ արիւնն աւելի առատաբար դէպ 'ի հոն դիմէ: Արդ թէ որ խնդիրը մարմնոյն մէկ կէտի մը նըկատմամբ միայն ըլլար, ինչպէս, եթէ կը յիշես, ստամոքսը մարսողութեան ժամանակ, կրնայ բոլոր մնացածը զանցընելով՝ այս կէտիս վրայ իր պաշտօնը լմացընել, և հեշտեալ անոր մէջը զեղուլ՝ միւս գործարանները զրկելով: Սակայն մեր խնդիրն ասանկ չէ. հարկ է որ ամեն դիւն առատաբար հոսէ, և ոչ թէ դնդերէ մը մաս մը նուազեցընել, ուրիշի մը տալու համար: Մարմնոյն վերէն 'ի վար ամենը միանգամայն զնոյնը կը պահանջեն. ամենքը մէկէն կ'ուզեն ողորդիլ անկէ: Եւ դիտէ որ այդ պարունայց պահանջներն և ոչ կաթիլ մ'աւելի արիւն կ'աւելցընեն մարմնոյդ մէջ: Ինչպէս կարելի է այդ բանը յաջողցընել ինչպէս որ կ'ընէ մայրդ, սիրելի դու, երբ տունը սովորականէն աւելի գործ ըլլայ, շուտ շուտ գեանայարկէն վերնայարկը կ'ընկէ, և քու սենեկէդ հօրը սենեակը կը յաճախէ: Այդ բանը երազ գործունէութիւն կ'ըսուի, և յիշաւի այդ արիւնը մեծ գործունէութիւն կը զգենու: Կը վազէ, կը վազէ, խռնած կռահակներու նման կը հասնի, և վազելով ետ կը դառնայ, կրկին և կրկին սրտին մէջէն անցնելով, որ արագ արագ ցընց-

մամբը կը լեցուի ու կը պարպուի: Դրժբաղդաբար խեղճ սիրտը փափկակազմ մէկ մըն է, որ իր սովորական ունակութեանց մէջ չախորժիր որ զինքը անհանգիստ ընեն. և սակայն այդ բռնի աշխատութիւնը զինքը մեծ տաքնապի մէջ կը ձգէ: Ուստի և անցած օրն ալ իր կրած նեղութենէն՝ բոլոր ուժովը իր պզտի սենեկին որմերը կը ցնցէր, որպէս զի իր պզտի տիրուհւոյն զգացընէ թէ ալ տանիլ չկրնար, և թէ երկուքն ալ վտանգի մէջ էին: Ուստի աղէկ է թէ գիտնաս որ եթէ մէկը յամառելով շատ երկայն ժամանակ վազէ, կրնայ մինչև մեռնիլ: Հին պատմութիւն որ սորվելու ըլլաս, հաւանականաբար պատմելու են քեզի այն Մարաթոնի զինուորին դէպքը, որ մէկ վազելով պատերազմի դաշտէն Աթէնքի դուռը դնաց, որպէս զի քառորդ մ'առաջ իմացընէ իր քաղաքակցաց հայրենեաց փրկութիւնը: Հասածին պէս ինկաւ մեռաւ:

Սակայն այդ արեան խենթ վազվածքովը միայն սխտոն է որ կը նեղուի: Նաև թողոց մէջէն ալ կ'անցնի իւրաքանչիւր ուղեւորութեան, որոնք բռնադատուած են արագ արագ շարժելու: Եւ այդ յօգուտ է մեր սիրուն հոգաբարձուին. վասն զի թղքերն առաջաստին իւրաքանչիւր վարիջնալուծն օդով լեցուելով, եթէ մեր առջի ըսածներն աղէկ կը յիշես, օդն աւելի առատաբար մէջը կը մտնէ, որով և թթուածինն ալ աւելի առատ կ'ըլլայ. և այսպէս նաև արիւնը ձեռքի տակ աւելի առատ պաշար կ'ունենայ, որով և կարող կ'ըլլայ այս ատենա գնդերաց մէջ եղած արտաքոյ կարգի շուայտութեանը համապատասխանելու: Քիչ մ'առաջ երկաթուղւոյն կրակավար մեքենաներուն վրայօք խօսք կ'ընէի: Տես թէ ինչպէս ամենը մարմնոյն մեքենային մէջ կը բովանդակուին: Որչափ աւելի կրակի պէտք ըլլայ, արիւնն ալ նոյնչափ աւելի երազ կը քալէ. որչափ աւելի երազ կը քալէ, նոյնչափ աւելի ստէպ ալ կը լեցուի այն արկղն՝ որուն մէջէն արիւնն այն թրթուածինն պաշարը կ'առնու, որուն

պէտք ունի մեքենայն քաղցրներու համար։ Այս ամենը մէկէն և միայն մէկ շարժմամբ մը կը քալեն, և պահանջին ու ծախուց մէջի հաւասարակշռութիւնն ինքնիրեն կը կատարուի։ Ո՛րչափ տընտեսութիւնը օրհնէնք չէին կարգար Աստուծոյ՝ եթէ այս կերպով իրենց դրամին արկին ալ ինչ համեմատաբար թեամբ որ կը պտորպուի՝ նոյն երազ համեմատութեամբ ալ լեցուէր։ Սակայն մէկ փոքր անպատեհութիւն մը կայ. առաջաստն այն անսովոր վազվածքէն բռնութիւն կրելով վերջապէս կը հողնի. և այսպէս ինքն ալ ինչպէս իր դրացին, սիրտը, տազնապով կը սկսի ցնցուիլ. անով շնչառութիւնը շատ երազութեամբ քալած ըլլալուն կանկ կ'առնու։ Այս բանս շատ գեղեցիկ դաս մըն է անոնց որ մէկէն շատ ծախք կ'ուզեն ընել. վասն զի բնութիւնը ամենայնի չափ կը դնէ, նաև երբ ամէնքը միայն ժամանակն ըլլայ։

Հիմա, եթէ կը համարձակիս, վազէ տեսնեմ։ Սակայն քեզի ատոյգն ըսելու համար, մեղք է եթէ վազելու չհամարձակիս, որովհետեւ Աստուած զողաքն ըրեր է որ վազեն։ Անոր համար ալ է որ անոնց աւելի աշխոյժ արիւն մը տուած է քան թէ մեզի՝ իրենց պապերուն. ոյսպէս ալ նաև աւելի առաձգուկան թորեր տուած է անոնց և հետեւաբար ալ աւելի առատ թթուածին գործածելու համար։ Բայց ստոյգն ալ ըսէ, շատ գէշ բան է թէ մէկը բոլոր իր կենացը մէջ կարենայ վազել, ինչպէս շատ մարդոց կը հանդիպի, առանց այն զարմանալի տրամադրութեց առաջին բառը գիտնալու, որոնցմով այդ գործողութիւնը կը կատարուի։ Ստոյգ է որ այդ անդիտութիւնը վազելու արդեւք մը չընեն, ոչ ամենէն պզտի սղուն և ոչ իսկ պզտի այծեմիկին որ նոյնպիսի մեքենայ մը կը քաղցրէ. սակայն այծեմիկին ըսելու բան մը չկայ. ինքը կարող չէ այն ամեն բան սորվիլ որ Աստուած ըրեր է յինքն. այլ պզտի տղան կրնայ սորվիլ եթէ այլք ուզեն։

Սակայն շատ վախ մ'ունենար։ Այդ

չարագոյժ պատահարները միայն այն ատեն կը հանդիպին՝ երբ չարաչար կը վարի մէկը. բայց աղէկ բան է նաև որ արիւնը մերթ ընդ մերթ իր խարաղանովը պզտի հարուած մը տայ։ Ետքի անգամուն քեզի զուրցեցի. այն կրակն որ դործարանները կը քաղցրէ՝ կեանքն է. քիչ մ'աւելի ապրիլը գէշ բան մը չէ։ Միւս կողմանէ այդ ներքին կրակին գործունէութեան սաստկութիւնը մեզի միայն վազելու կը ծառայէ։ Ամեն անգամ որ մարդ ճիգ մը կը թափէ, ամեն անգամուն որ բեռ մը կը վերցընէ կամ գործի մը կը գործածէ, արիւնն ալ այն զնդերները կու գայ կ'ողողէ՝ որ այն գործը ընելու համար կը շարժին. սիրտը աւելի արագ կը զարնէ, և օդն ալ թորոց մէջ աւելի առատութեամբ կը գիմէ։ Փայտ ճգբող մարդ մը դիտէ. եթէ կոճղը շատ կարծր ըլլալուն պատճառաւ հարկ ըլլայ միայն մէկ կամ երկու վայրկեան հարուած հարուածի վրայ ետէ ետեւ զարնել, կը տեսնես որ մարդը կը սկսի հեւալ, ճշդիւ ինչպէս թէ վազած ըլլար։ Ուստի, բաց ի իր տաքնալու իրաւունքէն, նաև կոճղը ճեղքելով բան մը չահած կ'ըլլայ։ Արիւն՝ զնդերաց մէջ միայն կրակ չբերեր, այլ նաև կը անուցանէ զանոնք, անանկ չէ՛, իւրաքանչիւր արեան կաթիլ որ կ'անցնի, իր պզտի ընծայն ալ կը թողու և որչափ աւելի կաթիլ անցնի, բնակա՛նապէս այնչափ աւելի առատ հունձք կը քաղեն զնդերը։ Անոր համար դիտէ այն մարդիկն որ մարմնոյ աշխատութեց կը զբաղին. որչափ աւելի ուժով և առողջ են քան զանոնք որ նոյնպիսի աշխատութիւններ չեն ընեն։ Խօսքս բաղկաց աշխատութեանց վրայ է, վասն զի կան խեղճ աղջիկներ որ առտուրնէ մինչև իրիկուն աթոռի վրայ նստած կ'աշխատին, և սակայն առողջութեան կողմանէ շատ բան չեն շահիր։ Կան դարձեալ անանկ մարդիկ, որ ինչպէս ես այսօր, անանկ ալ իրենք ամբողջ օրուան կէսը գրչով թղթեր գծելու կ'անցունեն, և յայտնի է որ անոնց զնդերներն ալ չեն ուժովնար։ Միով բանիւ՝ պայման մը

կայ որ հարկ է լրանայ, և զժրագողաբար այդ պայմանը միշտ չլրանար: Որչափ աւելի կ'աշխատի մէկը այնչափ աւելի ուտելու իրաւունք ունի: Դու հիմա տեսած ըլլալով ինչ որ մեր մարմնոյն մէջ կը կատարուի, իւրաքանչիւր անգամուն որ դնդեր մը կը շարժի, քեզի դիւրին բան մը կ'երեւայ: Առանց ծուխի կրակ չկըրնար ըլլալ, կ'ըսէ առածը: Սակայն լաւագոյն կ'ըլլար ըսել թէ առանց կիզելի նիւթոյ կրակ չկրնար ըլլալ. և մեր կիզանումները, դիտես որ կերած բաներն են: Փորձէ վառարանի մը շնկոյցը, ուրիշէ մը աւելի ուժով լսեցընել տալու՝ մէջը նուազագոյն փայտ դնելով:

Աւաղ. շատ դժբաղդներ կան որ շատ անգամ ասանկ բռնադատուած են ընելու. և ան ատեն արիւնը, փոխանակ առնոյց դնդերները սնուցանելու կ'ուտէ զանոնք, այնու պատճառաւ ինչպէս որ Բեռնարդոս Բալիսիին պատմութիւնը զուրցած ատենա ըսի քեզի: Երբ դու ալ մեծնաս, նայէ միշտ ատոր վրայ մըտածես, և երբէք չխնայես անոնց հացը՝ որոնք աշխատութեան կը դործածես:

Այս սորվածէդ դեռ ևս ուրիշ շատ սորվելու բաներ ալ կը տեսնեմ քեզի համար:

Եւ նախ թէ նոյն իսկ բնութիւնն այսու նկատմամբ քեզի կը ցուցնէ որ ձեռագործ աշխատութիւնը մեր էութեանը սքանչելի պայման մըն է, կրկին կեանք մը և առաւելութիւն մը, ուստի և հետեւեալ պէտք չէ հպարտութեամբ նայիլ այն մարդոց վրայ, որ ինչպէս սովորաբար կը զուրցուի, իրենց ճակտին քրտինքովը հացերնին կը շահին: Արդէն նոյն այդ բանը ձեռքի վրայ խօսք ըրած ժամանակս զուրցեցի քեզի, թէ ձեռքն աւելի օգտակար գործի մըն է ատոնց քան թէ քեզի: Հիմա նոյնն ուրիշ պատճառի համար քեզի կը կրկնեմ, վասն զի աշխատանքը զաշխատաւորը կը մեծցընէ, և բուն բնական անուականութիւն մը կը տպաւորէ անոր:

Հին բարբարոսներն որ պատերազմէ դուրս ուրիշ գեղեցիկ կամ ազնուական

բան ամենեւին չէին ճանչնար, աշխատանքը կ'արհամարհէին ու գերեաց վրայ կը ծանրաբեռնէին, անանկ որ տեղ տեղ դեռ ևս ճառալուստ աշխատութիւն, գերեաց աշխատութիւն անունը մնացած է վրան: Պատերազմի նկատմամբ, որ հին ազնուականաց վիճակեալ գործն էր, չեմ համարձակիր դէշ խօսելու, թէպէտ և դէմ խօսելու շատ կը փափաքէի. վասն զի ցորչափ որ կան այնպիսի չարամիտք որ զտկարներն ընկճել կը ճգնին, միշտ բարեբաղդութիւն մը ըլլալու է որ անանկ կտրիճներ ալ ըլլան՝ որ յանձն առնուն իրենց կեանքը վտանգի մէջ դնել որպէս զի այն բռուկը զսպին. ցորչափ որ գայլեր կան՝ հարկ է հովուի շներն պահել: Սակայն եթէ 'ի նպաստ պատերազմի կարելի է բան մը ըսել, այս է, թէ պատերազմը դառն այլ կարևոր աղէտ մըն է, որմէն ազատ մնալու համար կամքը միայն բաւական չէ: Ո'րչափ տարբեր է աշխատանքէ, այն աշխատանքն՝ որով մարդ բնութեան դէմ կը պատերազմի. պատերազմ մը բարերար և պտղաբեր, ուր յաղթութեանց յարգը միւսներուն պէս մեռելոց թուոյն վրայ չկայանար. որ ընդհակառակն իր ճամբուն վրայ զկեանքը կոհակօրէն կը բաշխէ. ըզնոյն ինքն զկեանքն աշխատաւորին ներսի դին՝ աշխատութեամբ, և դարձեալ զնոյն կեանքն իրմէն դուրս՝ աշխատութեան պտուղներովը: Ըսէ ինծի ո՞վ է աւելի ազնուականը. այն որ սպաննելով կը մեռնի, թէ այն որ աւելի ապրելով ուրիշն ալ կ'ապրեցընէ. և եթէ արդար է պատուել զառաջինն իր պաշտպանած իրաւանցը պատճառաւ, երբ այդ իրաւունքներն արդար են, ինչ պատուի արժանի չէ երկրորդը:

Սակայն մէկգի թողունք այդ փիլիսոփայական բարձրութիւնները և դառնանք 'ի քեզ, սիրելի, որ ամենեւին շահ մը չունիս ոչ պատերազմէն, ոչ անոր դափնի պսակներէն և ոչ անոր կոտորածներէն:

Այլ դու կոճղ իսկ ճեղքելու պատականութիւն մը չունիս, և ես իսկ

գրեզ ատոր հրաւիրելու միտք չունիմ։ Սակայն կենան մը կենաց մէջ, տղայու-  
թենէն սկսեալ, հազարումէկ ձեռքով  
ընելու բան կը պատահի, և շատ ան-  
գամ այն գործերը դայեակներու չը-  
յանձնելը անպատիւ բան կը սեպուի։  
Բայց դու նայէ զգուշանաս ասանկ սուտ  
ու չարագուշակ մտածութենէ։ Ձեռաց  
աշխատանքն անպատիւ չընել, մանա-  
ւանդ թէ կ'ազնուացընէ։ Աշխատանքը  
մերժելը, պզտիկութիւն մըն է, և մարդ  
իր անձը կենաց փառքերէն և ուրախու-  
թիւններէն մէկէ մը զրկել ըսել է։ Եթէ  
սեղանի վրայ՝ ուտելու աղէկ բան մը  
առջևդ դնեն, միթէ դայեակդ կը կան-  
չես որ նոյն բանն ուտէ։ Եթէ անանկ ա-  
ռիթ մը հանդիպի քեզի որ արիւնդ ե-  
րակացդ մէջ աւելի արագ քայցընելու  
պատճառ տայ, և անով կենացդ ուժն  
աճեցընես 'ի քեզ, որպէս զի կրցածէդ  
աւելի օգտակար ընես ինքզինքդ, ինչո՞ւ  
համար ուրիշի ընծայ տաս այն բանը,  
մանաւանդ երբ հաճոյական ընծայ մը  
չէ. որովհետեւ բարի աղջկունք առտուը-  
նէ մինչև իրիկուն այսպիսի առիթներէ  
շատ ունին։

Ատենօք պարսիկ իշխան մը կար որ  
դէպ 'ի Բարիդ կը ճանապարհորդէր.  
զայս իշխանն ազնուականաց պարա-  
խաղի մը կը տանին, որպէս զի Եւրո-  
պական քաղաքակրթութեան օրինակ  
մը առնու։ Հազար ու մէկ գիշերներուն  
իշխաններէն մէկու մը վրայ չէ խօսքս.  
ասիկայ կարծեմ Լուի Ֆիլիպին ժամա-  
նակներն էր։ Այն պարող գեղեցիկ օ-  
րիորդները հաճութեան փալիլուն աչ-  
քերով, վայելուչ ասպետներու թին ան-

ցած կը պտոյտքէին. կարծես թէ մէկ  
ոգւով ոգևորած էր բոլոր այն թեթեա-  
շարժ խումբը, որ երաժշտութե՝ զուարթ  
եղանակներով չափով կը շարժէին. այն  
լուսով շողշողուն ընդարձակ սրահին  
մէջ ամենայն ինչ զուարթ կ'երևնար,  
և մայրերն սրտերնուն մէջէն իրենց աղ-  
ջիկներուն վրայ կը նախանձէին, որ  
միշտ առջևնուն անցընելով կ'երթային  
ու կու գային։ Միայն մեր արեւելին էր  
որ արհամարհական աչք կը նայէր այն  
երջանիկ երիտասարդաց վրայ։

Երբ ամենայն բան լմնցաւ. — Ի՜նչ,  
ըսաւ իր առաջնորդին, ինծի չէիր ըսած  
որ Բարիդու առաջին ազգատոհմները  
տեսնայի պիտի։

— Անտարակոյս, պատասխանեց միւ-  
սը. այն օրիորդներն որ քիչ մ'առաջ տե-  
սար որ առջևդ կը պարէին, առնուազն  
քսանի չափ Գաղղիոյ ամենէն մեծ տու-  
ներէն էին։

— Օրիորդք որ պար կը բռնեն։ Հա-  
պա։ Հայրենիքս մասնաւոր ոմանք կան  
պար բռնելու որոշուած որոնց պարելու  
համար ստակ կը տրուի. սակայն մեր  
խաթունայք երբէք յանձն չեն առնուր  
պար բռնել։ Այդ գործը ռամիկ ժողո-  
վըրդեան կը վայլէ։

Նայէ, սիրելի դու, դէպքին համե-  
մատ յիշես պարսիկ իշխանին արհա-  
մարհանքը, ու հաւտա՛ ըսածիս, դու  
անձամբ աշխատէ։ Աշխատանքին պարն  
աւելի կ'աժէ՞ քան զմիւսը, երբ սրտանց  
կ'աշխատի մէկը։ Մանաւանդ թէ շատ  
անգամ շատ աւելի կ'աժէ, և ընդ հուպ  
կ'ուզեմ ըսել քեզի թէ ինչու։

Կը շարունակուի։

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ